ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1920–1945 ԹԹ.

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմական աղբյուրների վկայությամբ՝ XI դարից հայերն սկսել են բնակություն հաստատել Իրանի հյուսիսային և հյուսիսարևմտյան գավառներում, իսկ հետագայում նաև երկրի մի շարք կենտրոնական գավառներում[1]: XVII դարասկզբին Շահ-Աբբասը բազմաթիվ հայերի Իրանի խորքերը վերաբնակեցրեց: Այդպիսով՝ երկրի հարավային և կենտրոնական գավառներում առաջացան նոր բնակավայրեր: XVII–XIX դարերում հայ բնակչության մի մասը հարավային գավառներից տեղափոխվեց կենտրոնական գավառներ՝ այնտեղ ստեղծելով հայկական նոր բնակատեղիներ:

Շահաբբասյան գաղթի հետևանքով Իրանի հայ համայնքը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) և հարավային (Նոր Ջուղա կենտրոնով): Սրանք միմյանցից տարբերվում էին պատմական, աշխարհագրական, ազգային, կազմակերպական և այլ առանձնահատկություններով: Այս բաժանումը պահպանվեց մինչև XX դարի 40-ական թվականները:

Թեհրանի հայ բնակչության աճին զուգընթաց խախտվեց համայնքի՝ պատմականորեն ստեղծված այդ բաժանումը[2]: Այդ առթիվ Հովհ. Փահլևանյանը գրում է. «1940-ական թվականների կեսերին երկրի քաղաքական կյանքում ծայր առած բազմաթիվ դժվարությունները, Թեհրանի և շրջակայքի հայությանը վերաբերող մշակութային, կալվածքային և այլ հարցեր լուծելու խնդիրը պահանջում էր ստեղծել նոր շրջան»[3]: 40-ական թվականների կեսերին ստեղծվեց հայաբնակ կենտրոնական նոր տարածաշրջան, որի մեջ նրա կենտրոնը հանդիսացող Թեհրանի հետ մտան ինչպես հարակից կենտրոնական, այնպես էլ հարավարևելյան և հյուսիսարևելյան գավառների հայկական բնակավայրերը, որոնք մինչ այդ մտնում էին համայնքի հարավային տարածաշրջանի մեջ[4]:

Այսպիսով՝ Իրանի հայ համայնքը 1940-ական թվականներին բաժանված էր երեք հիմնական տարածաշրջանների: Պատմական առումով դրանցից ամենահինը հյուսիսայինն էր, այնուհետև՝ հարավայինն ու կենտրոնականը: Տարածաշրջանների կենտրոններից առավել հինը Նոր Ջուղան էր, ապա՝ Թավրիզն ու Թեհրանը: Սակայն իր նշանակությամբ,

---

[1] *Տե՛ս Հ. Մարտիրոսյան. Հայերի տեղաբաշխումն Իրանում (դեմոգրաֆիկ տվյալներ).– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 4, Իրան, Երևան, 1969, էջ 150:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Հ. Փահլևանյան. Իրանահայ համայնքը (1941–1979), Երևան, 1989, էջ 19:*

[4] *Տե՛ս Հ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 150–151:*

բնակչության թվի ու կազմակերպվածության տեսակետից կենտրոնականն առաջատարն էր՝ հանդիսանալով համայնքի կորիզը:

Նկատի ունենալով տարածաշրջանների առանձնահատկություններն ու համայնքի կյանքում ունեցած դերը՝ բնութագրենք դրանք հետևյալ հերթականությամբ՝ կենտրոնական, հյուսիսային և հարավային:

Կենտրոնական տարածաշրջանն իր մեջ ընդգրկում էր Թեհրանը, Վանագ գյուղը, Ղազվինը, Սուլթանաբադը (Արաք), Քյազազ (Քեզզազ), Քյամարա, Բուրվարի, Գյափլա (Ջափլաղ), Ղարաղան գավառների գյուղերը, Ռաշտը, Էնզելին (Փեհլևի), Մեշհեդը, Քերմանշահը և Համադանը[5]:

Թեհրանն Իրանի հայկական բնակավայրերի երիտասարդ օջախներից մեկն էր: Վկայություն կա այն մասին, որ Թեհրանում հայերը բնակություն են հաստատել XVIII դարի երկրորդ կեսից: Հատկանշական է, որ հին շրջանի պատմության մեջ Թեհրան անունը չի հիշատակվում. այն մի մեծ գյուղ էր և նշանավոր դարձավ Աղա Մոհամմադ խան Ղաջարի իշխանության շրջանում[6]՝ դառնալով երկրի մայրաքաղաք: Սակայն մինչև Առաջին համաշխարհային պատերազմն այն իր նշանակությամբ երկրորդական կարգի քաղաք էր:

XIX դարի վերջին Թեհրանում բնակվում էր մոտ հազար հայ: 1918–1921 թթ. քաղաքի հայ բնակչությունն ավելացավ՝ ի հաշիվ Միջագետքի ու Վան-Վասպուրականի փախստականների և Կովկասից տեղափոխվածների[7]: 1922–1923 թթ. քաղաքային վարչության կատարած շնչագրման համաձայն՝ Թեհրանի ազգաբնակչությունը 210 հազ. էր, այդ թվում՝ 3247 հայ (1633 այր և 1614 կին)[8]:

XVIII դարի վերջերից սկսած՝ տարբեր վայրերից հայեր են եկել ու հաստատվել Դարվազե Շահ-Աբդոլ Ազիմ թաղամասի առանձին շրջանում, որը կոչվել է «Մահալեյե Արմանի» («Հայկական թաղ»): 1939 թ. այնտեղ շուրջ 100 հայ ընտանիք էր ապրում[9]: Ապա նրանք սկսեցին բնակվել Դարվազե Ղազվին թաղամասին հարակից փողոցում: Այն կոչվեց «Հայոց թաղ» («Մահալեյե Արմանի»): Աստիճանաբար հայերը հաստատվում են նաև Հասանաբադում ու Թեհրանի այլ շրջաններում[10]:

Քաղաքի հայ, ինչպես նաև ամբողջ բնակչության աճը պայմանավորված էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումով, որն իր հերթին նպաստեց արդյունաբերական հիմնարկների, բանկերի, առևտրական ձեռնարկությունների, խոշորացված նախարարությունների ու գերատեսչությունների, մի շարք մշակութային ու սպասարկող այլ

---

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 151:*

[6] *Տե՛ս Պարսկահայ տարեցույց, Առաջին տարի, Թեհրան, 1927, էջ 37:*

[7] *Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 152:*

[8] *Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 39–40:*

[9] *Տե՛ս «Վերածնունդ» (Թեհրան), 3. X. 1939:*

[10] *Տե՛ս «Ալիք» (Թեհրան), 28. X. 1957:*

հիմնարկների առաջացմանը: 1944 թ., երբ Թեհրանը դարձավ իրանահայ համայնքի կենտրոնական տարածաշրջանի կենտրոն, այնտեղ հաշվվում էր ավելի քան 25 հազ. հայ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերը բնակվում էին քաղաքի Նադերի, Ղավամ-էս-Սալթանե, Շահ, Յուսեֆաբադ, Մանուչեհրի և կենտրոնական այլ փողոցներում[11]:

Թեհրանի հայ բնակչության բուռն աճն սկսվեց Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Հայ ընտանիքների հոսքը Թեհրան տեղի էր ունենում ի հաշիվ համայնքի հին կենտրոնների ու օջախների՝ Թավրիզի, Նոր Ջուղայի, Համադանի, Ռաշտի, Էնզելիի, Ղազվինի, Սպահանի, Բուրվարի, Գյափլա, Քյամարա ու Քյազազ գավառների հայ բնակչության, ինչպես նաև Ղարադանի գավառի հայկական բնակավայրերի[12]: 1940-ական թվականների կեսերին քաղաքի և շրջակայքի հայ բնակչության թիվը հասնում էր մոտ 40 հազ., որից ավելի քան 25 հազ., ինչպես նշվեց, բնակվում էր Թեհրանում[13]:

Սուլթանաբադ (Արաք) քաղաքը գտնվում է Թեհրանից 300 կմ հարավ-արևմուտք[14]: Քաղաքում հայերը հաստատվել են 1902–1903 թթ.: XX դարի առաջին տասնամյակից սկսած՝ Սուլթանաբադը դարձավ հարակից չորս հայաբնակ գավառների՝ Քյազազի, Քյամարայի, Գյափլայի ու Բուրվարիի հայոց ազգային իշխանության կենտրոնը: Մինչև 1922 թ. գարունը Սուլթանաբադի հայությունը հազիվ կազմում էր 60–65 տուն, իսկ արդեն 1927 թ. ՝130՝ շուրջ 700 բնակչով[15]: 1931 թ. ապրիլի 20-ի տվյալներով՝ Սուլթանաբադում բնակվում էր 931 հայ[16]:

Հատկանշական է, որ Սուլթանաբադի՝ երբեմնի փոքրաթիվ հայերն ապրում էին հայոց եկեղեցուն հարակից վայրերում՝ ցանկանալով լինել համախմբված: 1930-ական թվականների սկզբին արդեն հայերն ապրում էին ոչ միայն եկեղեցու շրջակայքում, այլև Շահփուր փողոցում[17]:

XX դարասկզբին Սուլթանաբադից հարավ և արևմուտք ընկած Բուրվարի, Գյափլա, Քյազազ ու Քյամարա գավառներում բնակվում էին մեծ թվով հայ գյուղացիներ:

Ղազվին քաղաքը հայերով բնակեցվել է XIX դարի երկրորդ կեսին՝ հիմնականում ի հաշիվ Նոր Ջուղայից, Համադանից, Թավրիզից փոխադրված ընտանիքների, ինչպես նաև Սպահանի գավառի գյուղացիների: Հետագայում քաղաքի հայ բնակչությունը շարունակ ավելանում էր[18]: 1920-ական թվականների վերջերին Ղազվինում ապրող հայերի թիվը

---

[11] Հ. Փ ա հ լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 21:
[12] Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 152:
[13] Տե՛ս «Վերածնունդ», 12. XI. 1944:
[14] Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 154:
[15] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 105:
[16] Տե՛ս «Ալիք», 10. II. 1932:
[17] Տե՛ս «Ալիք», 18. II. 1932:
[18] Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 158:

հաշվվում էր մոտ 560 շունչ (110 ընտանիք)[19]: Իսկ արդեն Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Ղազվինում հայ ընտանիքների թիվը հասնում էր 300-ի[20]:

Ղարադաղ գավառն ընկած է Համադան քաղաքի հյուսիսարևելյան և Ղազվինի հարավարևմտյան կողմում՝ վերջինից 40–50 կմ հեռավորության վրա: 1927 թ. «Պարսկահայ տարեցույցի» տվյալներով՝ Ղարադաղ գավառի վեց գյուղերում պարսիկ գյուղացիների հետ բնակվում էր մոտ 350 հայ ընտանիք՝ 1750 բնակչությամբ[21]: 1940 թ. Ղարադաղում ապրում էին 2057 հայ[22]:

Գիլանի նահանգի կենտրոնում գտնվող Ռաշտ քաղաքում 1916 թ. կար 571, 1924 թ.՝ 590, 1931 թ.՝ 596[23], 1934 թ.՝ 616 հայ[24]: Ակնառու է, որ հայերի թիվն աստիճանաբար աճ է արձանագրել:

Էնզելին (Փեհլևի) գտնվում է Գիլանի նահանգում, Կասպից ծովի ափին: Նավահանգստային այդ քաղաքն ընկած է Ռաշտից 40 կմ հեռավորության վրա: XX դարի 20-ական թվականներին Էնզելին ուներ մոտ 20 հազար ազգաբնակչություն, այդ թվում՝ 300–350 հայ[25]: Իսկ արդեն 1934 թ. քաղաքն ուներ 775 հայ բնակիչ[26]:

Հյուսիսային կամ Ատրպատականի շրջանը վարչական առումով բաժանված էր երկու օստանի (նահանգ)՝ Արևելյան Ատրպատական՝ Թավրիզ կենտրոնով, և Արևմտյան Ատրպատական՝ Ուրմիա (Ռեզայե) կենտրոնով: Տեղի հայերը հիմնականում բնիկներ էին: Այդ տարածաշրջանում էին գտնվում Իրանի հայկական հին բնակավայրերը: Թավրիզից բացի տարածաշրջանի մեջ են մտնում հայերով բնակեցված Ուրմիան, Խոյը, Սալմաստը, Մակուն, Ղարադաղը և Մարադան:

1912–1914 թթ. մարդահամարի տվյալներով՝ Ատրպատականի հայության ընդհանուր թիվը 32750 էր[27]: Առաջին աշխարհամարտի ընթացքում Ատրպատականի հայությունը մեծապես նվազեց գաղթի և կոտորածի պատճառով: 1926–1927 թթ. այնտեղ կար 14480 հայ[28]:

Ատրպատականի հայության 1926–1927 թթ. համառոտ վիճակագրության համաձայն՝ Ուրմիա քաղաքի և 33 գյուղերի հայության թիվը 2400 էր[29]:

---

[19] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 101:

[20] Տե՛ս Կ. Գ է ո ր գ ե ա ն. Ամէնուն տարեգիրքը 1958, Ե տարի, Բեյրութ, 1957, էջ 386:

[21] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 102–103:

[22] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 244:

[23] Տե՛ս «Ալիք», 28. V. 1932:

[24] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 246:

[25] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 83:

[26] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 242:

[27] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, Երկրորդ տարի, Թեհրան, 1929, էջ 156:

[28] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 53:

[29] Տե՛ս նույն տեղում:

1929 թ. «Պարսկահայ տարեցույցում» բերված Ուրմիայի գավառի վիճակագրական տվյալներից պարզ է դառնում, որ գավառի հայությունը 1920-ական թվականների վերջերին կազմում էր 461 տուն՝ 1830 բնակչով[30]: Միայն Ուրմիա քաղաքում ապրում էր 61 տուն կազմող 226 հայ[31]:

Ակնառու է, որ հայության թիվը շրջանում նվազել էր: Հիմնական պատճառն ուրբանիզացիայի գործընթացն էր, ինչի հետևանքով շատ գյուղացիներ հաստատվում էին քաղաքներում՝ աշխատանք գտնելու ակնկալիքով:

Իրանի հին հայկական բնակավայր Խոյի մասին հիշատակվում է դեռևս XIII դարից[32]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ թուրքական արշավանքի ժամանակ, տեղի հայ բնակչությունը կոտորվել է կամ փախել այլ շրջաններ ու Կովկաս[33]: Փրկված կանանց ու երեխաների մեծ մասը հաստատվեց Թավրիզում: Վերապրողներից շատերն անցան Հայաստան: Գյուղեր վերադարձողներ չեղան[34]:

1929 թ. «Պարսկահայ տարեցույցում» զետեղված վիճակագրական տվյալների համաձայն՝ Խոյի շրջանում կար շուրջ 25 թրքացած հայ:

Սալմաստում հայերը բնակվել են մոնղոլական տիրապետության շրջանից[35]: Գավառը գտնվում է Ատրպատականի հյուսիսարևմտյան շրջանում և սահմանակից է Թուրքիային: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Սալմաստ գավառում (կենտրոնն էր Շահփուրը՝ նախկին Դիլմանը) բնակվում էր շուրջ 15 հազ. հայ: Հաֆթվան գյուղն այդ ժամանակ ուներ 4500 բնակիչ[36]: Այն Սալմաստի ամենամեծ հայաբնակ գյուղն էր:

1920-ական թվականներին Սալմաստ գավառի 14 գյուղերից Հաֆթվանը, Փայաջուկը[37], Ղալասարը բացառապես հայաբնակ էին, իսկ մնացյալ գյուղերում հայերն ապրում էին այլազգիների հետ: Նշված ժամանակահատվածում Սալմաստ գավառում հայերը կազմում էին 242 տուն՝ 992 բնակչով[38]:

1930 թ. Սալմաստ գավառում տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ: Աղետի հետևանքները վերացնելու ուղղությամբ զգալի աշխատանքներ կատարվեցին:

---

[30] 1929 թ. «Պարսկահայ տարեցույցում» զետեղված են Ուրմիայի գավառի մեջ մտնող 33 գյուղերի և Ուրմիա քաղաքի հայության վիճակագրական տվյալներն առանձին-առանձին, որոնց հանրագումարը տարեցույցի տվյալով կազմել է 1828 մարդ, սակայն մեր հաշվարկով այն կազմեց 1830 անձ:

[31] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 152:

[32] Տե՛ս Ա. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 242:

[33] Տե՛ս Հ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 161:

[34] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 154:

[35] Տե՛ս Ա. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 242:

[36] Տե՛ս Հ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 161:

[37] Փայաջուկ գյուղում է ծնվել հայ վիպասան Ռաֆֆին:

[38] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 152:

1943 թ. Սալմաստ գավառի հայերի ընդհանուր թիվը հասնում էր 4000-ի[39]:

XX դարասկզբին Մակուն ուներ շուրջ 240 հայ ընտանիք (1400 մարդ), որոնցից շատերը 1918 թ. գաղթեցին այլ վայրեր[40]: Այստեղ փոքրաթիվ հայություն մնաց: 1926–1927 թթ. Մակու քաղաքում ապրում էր 50 հայ՝ մեծ մասը արհեստավորներ, Ս. Թադեոս առաքյալի վանքի շրջակայքում՝ 40 հայ[41], որոնք և հիմնականում հանդիսանում էին հայկական ճարտարապետական այդ նշանավոր կոթողի սպասավորներն ու պահպանողները:

1929 թ. «Պարսկահայ տարեցույցում» Մակուի գավառի վերաբերյալ հետևյալ վիճակագրությունն է առկա. Մակու քաղաքում հայերի թիվը 60 էր, Վանքի գյուղում[42]՝ 40 (7 տուն), վանքապատկան Դարաշամբում[43]՝ 75 (20 տուն): Քիշմիշ թափեում հայեր չկային[44]: Այսպիսով՝ Մակուի գավառի հայության ընդհանուր թիվը 175 էր: 1926–1927 թթ. վիճակագրության մեջ դարաշամբցի հայերի թիվը 100 էր նշվում[45]: Այսինքն՝ հայերն աստիճանաբար լքել են Դարաշամբ գյուղը:

Առավել հայաշատ գավառներից էր Ատրպատականի հյուսիսարևելյան մասում գտնվող Ղարադաղը: Արաքսին ափամերձ այս հնագույն բնակավայրում 1926–1927 թթ. կար 2500 հայ, որոնք ապրում էին 21 գյուղերում[46]: 1929 թ. «Պարսկահայ տարեցույցում» Ղարադաղի գավառի հայության վիճակագրական պատկերը հետևյալն էր. 22 հայկական գյուղերի հայությունը կազմում էր 470 տուն՝ 2395 բնակչով: Հատկանշական է, որ այդ 22 գյուղերից Նորաշենը ազգային գյուղ էր՝ Թավրիզի Արամյան դպրոցի սեփականությունը[47]: 1930 թ. Ղարադաղում ապրում էր 2792 հայ[48]:

Մարաղայում[49] հայկական բնակավայր գոյություն ուներ XIII դարից[50]: Մինչև XX դարի սկիզբը Մարաղայում կար համեմատաբար մեծ թվով հայ բնակչություն, և քաղաքը հա-

---

[39] Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 161:

[40] Հ. Փ ա հ լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 33:

[41] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 53:

[42] Սուրբ Թադեոս առաքյալի վանքը նախկինում աթոռանիստ էր:

[43] Դարաշամբ գյուղը գտնվում էր համանուն գավառում (մահալում)՝ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքից 3 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը հայաբնակ էր, սակայն հետագայում դատարկվեց հայությունից: Այժմ Դարաշամբն ավերակ է:

[44] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 154:

[45] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 53:

[46] Տե՛ս նույն տեղում:

[47] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 155:

[48] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 244:

[49] Քաղաքը գտնվում է Թավրիզից 132 կմ հարավ:

[50] Տե՛ս Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 242:

մարվում էր հայ ու ասորական բնակակենտրոններից մեկը[51]: 1926–1927 թթ. Մարաղայում ապրում էր 1300 հայ[52]:

Թավրիզում հայերի մասին հիշատակություն կա դեռևս XIII դարից: Թավրիզը համայնքի հյուսիսային շրջանի կենտրոն դարձավ 1833 թ.: XX դարասկզբին քաղաքում մեծ թվով հայեր կային:

Ըստ 1929 թ. «Պարսկահայ տարեցույցի», որը վկայակոչում էր Ատրպատականի հայոց թեմական առաջնորդարանի վիճակագրական տվյալներն այդ ժամանակի Թավրիզի հայության վերաբերյալ, այնտեղ ապրում էր 958 ընտանիք՝ շուրջ 5000 բնակչով: Միաժամանակ տեղեկանում ենք, որ Թավրիզի հայությունը հարյուր տարվա ընթացքում հավաքվել էր Ատրպատականի գավառներից, գլխավորապես Ղարադաղից, ուր ճնշումն ու հալածանքն ավելի ուժեղ էր, Ալչամուլք և Սոհլուլ (Սէօհլիլ) գյուղերից, Մուժամբարից (Մուժումբար), Մարաղայից, Սալմաստից ու այլ վայրերից[53]:

Ատրպատականի հայոց թեմական առաջնորդարանի՝ 1930 թ. հունիսին կատարած ընդհանուր շնչագրման համաձայն՝ հայերի թիվը Թավրիզում 6351 էր՝ 3169 արական, 3182 իգական սեռի՝ տեղաբաշխված 1412 ընտանիքում[54]: Սակայն այդ վիճակագրությունը չի կարելի լիակատար համարել, քանի որ շնչագրման պատահական ստուգումից պարզվել էր, որ չցուցակագրված ընտանիքներ էին մնացել[55]:

1920-ական թվականներին Թավրիզն իր վրա դրոշմեց զարգացած քաղաքի կնիքը. նախկին ծուռումուռ փողոցների փոխարեն կառուցվեցին գեղեցիկ պողոտաներ: Ազգաբնակչությունը կրկնապատկվեց. 1931 թ. Թավրիզն ուներ շուրջ 400 հազ. բնակչություն, որից 8 հազ. հայ էր[56]:

Հարավային տարածաշրջանում բնակվող հայերի մեծամասնությունը ծագումով Արևմտյան Հայաստանի արևելյան գավառներից ու քաղաքներից էին, Նախիջևան և Ջուլֆա քաղաքներից, դրանց հարևան ու հարակից շրջաններից, Շուքուր-ի-սաադի սահմաններում գտնվող տարածքների մի մասից[57]:

Այդ տարածաշրջանի հայկական բնակավայրերի գլխավոր օջախներն էին Նոր Ջուղան, Սպահանը (պարսկական մասը), Փերիա ու Չհարմհալ գավառների գյուղերը, ինչպես նաև Խուզիստանի, Ֆարսի գավառներում ու Բախտիարի նահանգում[58] գտնվող Աբադան, Մասջեդ-Սոլեյման, Աղաջարի, Ահվազ և Շիրազ քաղաքները:

---

[51] Տե՛ս Հ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 162:

[52] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 53:

[53] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 141–142:

[54] Տե՛ս «Ալիք», 3. XII. 1931:

[55] Տե՛ս նույն տեղում:

[56] Տե՛ս «Ալիք», 16. VIII. 1931:

[57] Տե՛ս Հ. Մարտիրոսյան. Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, 2007, էջ 133:

[58] Շահրքուրդ քաղաքը նահանգի կենտրոնն է:

Նոր Ջուղան բաժանված էր ութ թաղամասի՝ Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Չարսու, Հակոբջան, Ղարագյոլ, Քոչեր (Սանգթրաշ), Դավրեժ (Մահալաթ) ու Երևան[59]:

Ըստ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի պարբերական վիճակագրությունների՝ 1916 թ. Նոր Ջուղայում ապրում էր 3748, 1920 թ.՝ 3109, իսկ 1936 թ.՝ 3800 հայ[60]: Վիճակագրական այս տվյալներից, ինչպես նաև 1929 թ. «Պարսկահայ տարեցույցից» (ըստ տարեցույցի՝ 1920-ական թվականների վերջերին Նոր Ջուղայում ապրող հայերի թիվը 3500 էր)[61] պարզ է դառնում, որ 1916–1920 թթ. արտագաղթի պատճառով նվազում, ապա նորից աճում է Նոր Ջուղայի բնակչության թիվը:

Իրանցի պատմաբան Ջավահիր-օլ-Քյալամը ևս վկայում էր XX դարի 30-ական թվականներին Նոր Ջուղայում ապրող շուրջ 4000 հայերի գոյությունը և նշում, որ վերջիններս բնակվում էին քաղաքի 8 թաղամասերում (Թավրիզեցիների, Սանգթրաշան, Մեծ Մեյդան, Չարսու, Երևան, Փոքր Մեյդան, Հակոբջան, Ղարագյոլ) և նորակառույց Նազարի փողոցում[62]:

Չհարմհալ[63] գավառը բաժանված էր չորս մասի. Գյանդուման գավառակն արևելյան մասն էր կազմում, Քհարը[64]՝ հյուսիսային, Լարը՝ հարավային և Միզդեհը՝ արևմտյան[65]: XX դարի առաջին տասնամյակներին հայ գյուղացիությունը տեղի Բախտիարի խաների ֆեոդալական շահագործումից փրկվելու և իր գոյությունը պահպանելու նպատակով մաս-մաս հեռացավ գավառից՝ հաստատվելով քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում: Հնդկական հայ համայնքի հետ ունեցած բազմաթիվ կապերի շնորհիվ գավառի հայ բնակչության մեծ մասը փոխադրվեց Հնդկաստան: Շուրջ 2000 մարդ բնակություն հաստատեց Իրանի հյուսիսում[66]: Չհարմհալցիների մեծ մասը հաստատվեց Իրանի նավթարդյունաբերական կենտրոններում՝ Մասջեդ-Սոլեյմանում, Աղաջարիում, Աբադանում, Ահվազում և այլուր:

1920 թ. Չհարմհալի գավառի 14 գյուղերում ապրում էր 3485, իսկ 1936 թ.՝ 4300 հայ (Բալըղլու և Դեշիխ գյուղերը չհաշված)[67]: Ինչպես տեսնում ենք, այդ տարիներին հայությունն աճ է արձանագրել:

Սպահանի նահանգի Փերիա (Ֆերեյդան) գավառի տարածքում XVII դարից գոյություն է ունեցել հայ գյուղական բնակչության կենտրոնատեղի: Չհարմհալի համեմատությամբ

---

[59] Տե՛ս Հ. Փ ա հ լ և ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 34:

[60] Տե՛ս «Ալիք», 17. VI. 1952:

[61] Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1929, էջ 13:

[62] Տե՛ս «Վերածնունդ», 1. IX. 1934:

[63] Չհարմհալ (Չահարմահալ) պարսկերեն նշանակում է չորս տեղ կամ չորս շրջան:

[64] Հանդիպում է նաև Քիար ձևով:

[65] Տե՛ս Ա վ. Ե դ գ ա ր յ ա ն. Իրանի Չհարմհալ գավառը, Թեհրան, 1963, էջ 33:

[66] Տե՛ս նույն տեղում:

[67] Տե՛ս Ա. Ս ա ր ե ա ն. Պատմութիւն Չարմահալ գաւառի, Թեհրան, 1980, էջ 638–639:

այն կայուն էր և ավելի քան երեքուկես դար հանդիսանում էր երկրում հայ բնակչության հիմնական վայրերից մեկը: 1919 թ. մարդահամարի տվյալներով՝ Փերիայի գավառում կար 27 հայկական գյուղ՝ 12130 բնակչությամբ[68]:

Փերիան Իրանի ամենամեծ հայաբնակ գավառն էր, որը մինչև 1946 թ. հայրենադարձությունն ուներ 24 հայաբնակ գյուղ՝ շուրջ 16000 բնակչությամբ[69]:

Իրանի նավթարդյունաբերության խոշորագույն կենտրոն Աբադանը հայերով սկսեց բնակեցվել XX դարասկզբին, երբ նոր էր ծնունդ առնում նավթային արդյունաբերությունը: Տեղի հայ բնակչությունն ավելացավ հատկապես 1920-ական թվականներին՝ Իրանի հայաբնակ տարբեր շրջանների, նաև Վան-Վասպուրականի, Խոյի, Սալմաստի փախստականների համար Իրաքի Նայր-օլ-Օմար վայրում անգլիացիների կառուցած բնակավայրի հայերի հաշվին[70]: 1923 թ. այստեղ բնակվում էր 400, 1927 թ.՝ 490, 1928 թ.՝ 610, իսկ 1938 թ.՝ 2000 հայ[71]: Քաղաքի հայ բնակչության թիվը, ճիշտ է, աստիճանաբար ավելացավ, սակայն նավթարդյունաբերության մեքենայացման հետևանքով հայերի հոսքը Աբադան դադարեց:

1922 թ. Իրանում ապրում էր ավելի քան 95 հազար հայ[72]: Իրանահայերի թիվը 1922 թ. հետո մեծացել է բնակչության բնական աճի հետևանքով և ոչ միայն. 1932–1935 թթ., երբ խորհրդային իշխանությունը երկրից արտաքսեց իրանահպատակներին, մի քանի հազար իրանահայեր վերադարձան իրենց բնակավայրերը:

1944 թ. իրանահայերի թիվն անցնում էր 100 հազ.-ից: Իրանահնդկաստանի թեմի հայոց կրոնական խորհրդի տվյալներով՝ 1944 թ. մայիսին խորհրդի իրավասության տակ գտնվող Իրանի քաղաքներում (Թեհրանը չհաշված) և գավառներում ապրող հայերի թիվը 50502 էր[73]: Այդ նույն ժամանակ Թեհրանում կար ավելի քան 25 հազ. հայ: Մինչև 20 հազ. հայ կար համայնքի հյուսիսային տարածաշրջանում: Այդ ընդհանուր թվին պետք է ավելացնել նաև 6-ից 7 հազ. կաթոլիկներին ու բողոքականներին[74]:

Այսպիսով, փորձելով ներկայացնել հայերի տեղաբաշխումն Իրանում 1920–1945 թթ.՝ կարող ենք փաստել, որ հայությունը, պատմական ճակատագրի բերումով հաստատվելով Իրանում, այնտեղ հիմնեց նոր բնակավայրեր կամ համալրեց արդեն գոյություն ունեցողները: Իրանահայ համայնքում այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերը պայմանավորված էին քաղաքական իրադարձություններով և տնտեսական գործոններով: Աշխատանք ձեռք բերելու ակնկա-

---

[68] *Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 60:*

[69] *Տե՛ս «Ալիք», 15. I. 1979:*

[70] *Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հայերի տեղաբաշխումն Իրանում..., էջ 170:*

[71] *Տե՛ս Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 94, Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 241:*

[72] *Տե՛ս Ե. Խ ա թ ա ն ա ս ե ա ն. Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 24–25:*

[73] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 4345, թ. 2–2 շրջ.:*

[74] *Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հայերի տեղաբաշխումն Իրանում..., էջ 173:*

լիքով իրանահայերից շատերը գյուղական վայրերից, ինչպես նաև գավառական քաղաքներից տեղափոխվեցին երկրի կենտրոնական ու արդյունաբերական քաղաքներ: Այդ տեղաշարժերի և արտաքին իրողությունների հետևանքով հայերի վիճակագրական տվյալները շարունակ տատանվում էին:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПЕРЕДВИЖЕНИЯ ИРАНСКОЙ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В 1920–1945 ГГ.

АСТХИК АКОПЯН

Резюме

Армянский народ, по воле своей исторической судьбы обосновываясь в Иране, создает новые или же пополняет уже существующие поселения. В 1920–1945 гг. в Иранской армянской общине произошли демографические передвижения, обусловленные политическими событиями и экономическими факторами. В поисках работы многие армяне из сельских районов Ирана стали переселяться в центральные и промышленные города страны. Вследствие этих передвижений и внешних событий, статистические данные иранских армян периодически колеблются.

THE DEMOGRAPHIC MOVEMENTS OF THE IRANIAN-ARMENIAN COMMUNITY IN 1920–1945

ASTGHIK HAKOBYAN

Summary

Due to historical fate by settling in Iran, the Armenians have founded new residences or have replenished new to already existing ones. Demographic movements conditioned by political realities and economic factors took place in the Iranian-Armenian community in 1920–1945. In the hope of obtaining a job, many Iranian Armenians moved out from rural areas, as well as from provincial towns to the country's central and industrial cities. As a result of these movements and external realities, the demographic data of the Iranian Armenians always changed.